

ժամ յարեմուտս մեծ Գորմէլի գիւղին, որ ունի 20 տուն բնակիչ:

Գիւղիս աւերակներն բազմաթիւ են, միոյն մէջ տեսնուած է հինգ հատ մարդու գլուխներ, որպէս կը պատմեն՝ չափազանց մեծ է:

8. ՄԵԾ ԳՕՐՄԱԼՈՒ.— Է 1 ժամ յարեւելս Գիւաւանայ, ունի 42 տուն բնակիչ:

Գիւղիս ետեն՝ Զէյթի և Գորմալուի մէջ կը բարձրանայ մի սար, ուր կայ մի հինաւուրց մնացած բերդ. այս տեղ ապաստանած էր Մէհմէտ փաշան, երբ 66—63 թուականներուն Բագրևանդայ առաջնորդ Սիմէօն վարդապետ Ատովմեանի սպանման պատճառաւ զինք կորոնէին, որ յետոյ զացեր Էջմիածին կաթուղիկոսին յանձնուէր, իւր անմեղութիւնը յայտնելով՝ ներում գտած է:

9. ՓՈՔՐ ԳՕՐՄԱԼՈՒ.— Գիւղս ունի 16 տուն բնակիչ, 1 ժամ Գոմքայ արևելեան հիւսիսն և Գոմէ 1 ժամ արեմտեան հարաւ:

Այս գիւղի մօտ կայ նաև մի բարձր սար, որոյ գագաթն բերդ մի, այս սարը 10 քիլոմէթր բարձր կը լինի:

10. ԳԵԱԶԳԵԱԶՔ.— Գիւղս մէկ ժամ Սապունչիի արևելեան հիւսիս, Զէյթի հիւսիսն, $\frac{1}{2}$ ժամ Բըրըքցոց արեմտեան հարաւ, Չամչա լեռան ստորոտն 15 տուն բնակիչ ունի:

Գիւղէս $\frac{5}{4}$ ժամ արևելեան հիւսիս գտնուած ձորակի մի ձախ եղրն կայ կեազրէ կեաչէ (աղջկան քար) կոչուած մի մեծ քար, որ հողին մէջ անկուած է. գլուխը թամբի ձևով կոփուած. ուստի քիչ հեռուն